

**Համայնք (2018թ. 3-րդ եռամսյակ)**

**1.Բնակավայրերի քանակը՝ 9:**

**2.Հրավիրված խորհրդակցությունների քանակը՝ 4:**

**3.Համայնքի բնակիչների ընդունելությունների քանակը՝ 0:**

**4.Բնակավայրերի այցելությունների քանակը՝ 3, որից** Արդվի-1, Մղարթ 2 բնակավայրերում:

**5.Ավագանու նիստերի քանակը՝ թվով 4:**

**6.Ավագանու մշտական հանձնաժողովների քանակը՝ թվով 5:**

1. ֆինանսավարկային և տնտեսական հարցերի,
2. քաղաքաշինության, հողօգտագործման և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի,
3. գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդական և զբոսաշրջության հարցերի,
4. սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի,
5. իրավական հարցերի,

**7. Սոցիալական աշխատողի կողմից փնային այցելությունների քանակը՝ 11**

**8. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության հաստատություններ կադարված այցեր՝**

Մայիսի 31-ին հաշվետու համերգին մասնակցելու նպատակով այցելություն համայնքի «Օձունի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ներ:

**9.Դպրոցական փարիքի երեխաների քանակը, որոնք դուրս են մնացել ուսումնական պրոցեսից՝** այդպիսիք չկան:

**10.Հանրային միջոցառումներ՝**

Հուլիսի 4-ին Օձունի նախադպրոցական ուսումնական հաստատությունում կազմակերպվել է Ավարտական հանդես:

Հուլիսի 10-ին Օձունի մշակույթի տանը կազմակերպվել է Պարային համույթի հաշվետու համերգ:

Օգոստոսի 8-ին Օձուն համայնքի Արդվի բնակավայրի եկեղեցու բակում տեղի ունեցավ Արդվու եկեղեցու խաչի օծման արարողությունը:

Սեպտեմբերի 20-ին Օձունի նախադպրոցական ուսումնական հաստատությունում կազմակերպվել է միջոցառում նվիրված Անկախության տոնին :

Սեպտեմբերի 26-ին Այգեհատի հիմնական դպրոցում կազմակերպվել է միջոցառում նվիրված Անկախության տոնին :

Սեպտեմբերի 27-ին Կարմիր Աղեկի հիմնական դպրոցում կազմակերպվել է միջոցառում նվիրված Անկախության տոնին :

Սեպտեմբերի 28-ին Օձունի եկեղեցու բակում կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայ ազգային ավանդական ծիսակատարություններին:

**11. Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկված միջոցներ՝**

Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

**12.Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում՝**

Համայնքում իրականացվում է կանոնավոր աղբահանություն, ավագանու կողմից հաստատված հայեցակարգով:

**13. Համայնքի վարչական տարածքում բիզնես գործունեություն իրականացնող գործարարների և ձեռնարկատերերի հետ հանդիպումներ՝**

Համայնքի վարչական տարածքում բիզնես գործունեություն իրականացնող գործարարների և ձեռնարկատերերի հետ հանդիպումներ չեն անցկացվել:

**14.Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ կամ համարժեք) լիարժեք և արդյունավետ շահագործման աշխատանքներ՝**

Համայնքի պաշտոնական կայքը ՀՀ օրենսդրության պահանջներին և համայնքային պաշտոնական կայքի վարման կարգին համապատասխանելու ուղղությամբ ընթանում են համապատասխան աշխատանքներ:

**15. Ավագանու հրապարակային նիստերի առցանց հեռարձակում**  
Ավագանու նիստեր չեն հեռարձակվել:

## Օձուն համայնք

Խոշորացման արդյունքում ձևավորվել է առավել մրցակցային ավագանի, հաստիքների վերաբաշխում, ինչի արդյունքում կրկնվող հաստիքները (աշխատակազմի քարտուղար, հաշվապահ և այլն) փոխարինվել են ծառայություններ մատուցող հաստիքներով:

Օձուն համայնքում իրականացվող ներդրումների շրջանակում համայնքի կողմից ձեռք բերվող տեխնիկական սպասարկելու նպատակով՝ նախատեսվելու են հետևյալ հաստիքները.

1 աղբատար մեքենայի համար՝ մեկ վարորդ և առնվազն 1 բանվոր (ընդամենը՝ 2 հաստիք), JCB կամ համարժեք ունիվերսալ տեխնիկայի համար՝ 1 վարորդ:

Վերոնշյալ տեխնիկայի սպասարկման նպատակով ընդհանուր առմամբ նախատեսվել է **3 հաստիքի** ավելացում:

Համայնքապետարանում 2018 թվականի նոյեմբերից կգործի է քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՍԳ), որի միջոցով իրականացվելու է բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների տրամադրումը: Գրասենյակը գործելու է «Մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքով՝ բնակչի համար ապահովելով հարմարավետ և որակյալ սպասարկում:

### Համայնքի հաստիքներ

#### Համայնքապետարանի աշխատակազմ

Համայնք (բնակավայր)	Մինչև խոշորացումը	Խոշորացումից հետո	
	Հաստիք	Հաստիք	Ավագանու անդամներ
<b>Օձուն</b>			
1. գ. Օձուն	16	17	<b>7</b>
2 . գ. Ամոջ	-	2	-
3. գ. Այգեհատ	4	2	-
4. գ. Արդվի	4.5	2	<b>1</b>
5. գ. Արևածագ	8.5	4	<b>1</b>
6. գ. Կարմիր Աղեկ	3	2	
7. գ. Ծաթեր	6	3	
8. գ. Հազվի	5.5	3	<b>1</b>
9. գ. Մղարթ	5	2	<b>1</b>
	52.5	37	<b>11</b>

Օձուն համայնքում խոշորացումից հետո համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի նախկին աշխատակազմերում հաստիքները կրճատվել են:

Համայնքապետարանի աշխատակազմում հաստիքները համալրվել են 2 նոր հաստիքով, աուդիտորի և սոցիալական աշխատողի հաստիքով:

**Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ**

Համայնք (բնակավայր) ՀՈԱԿ-ի անվանումը	Մինչև խոշորացումը	Խոշորացումից հետո	
	Հաստիք	Հաստիք	
<b>Օձուն</b>			
1. գ. Օձուն			
1) Թիվ 1 ՆՈՒՀ ՀՈԱԿ	<b>12.5</b>	<b>12</b>	
2) Թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ	<b>12.5</b>	<b>14.5</b>	
3) Օձունի մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ	<b>21.5</b>	<b>21.25</b>	
4) Օձունի մշակույթի տուն ՀՈԱԿ	<b>2.5</b>	<b>5,75</b>	
5) Օձունի գրադարանային համակարգ ՀՈԱԿ	<b>2</b>	<b>7</b>	
6) Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ	<b>6</b>	<b>11</b>	
7) Օձունի բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ	<b>18.5</b>	<b>19.5</b>	
2 . գ. Ամոջ	-		
3. գ. Այգեհատ	-		
4. գ. Արդվի	-		
5. գ. Արևածագ			
1) Արևածագի մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ	<b>2</b>	<b>2</b>	
6. գ. Կարմիր Աղեկ	-		
7. գ. Ծաթեր	-		
8. գ. Հագվի	-		
9. գ. Մղարթ	-		
	<b>77.5</b>	<b>93</b>	

Մինչև խոշորացումը Օձուն համայնքի ՀՈԱԿ-ներում եղել է 77,5 հաստիք, իսկ խոշորացումից հետո դրանց թիվը ավելացել է 15.5-ով դառնալով 93 հաստիք:

2018 թվականի փետրվարին Օձուն համայնքի ավագանու որոշման համաձայն Օձունի թիվ 1 ՆՈՒՀ, Օձունի թիվ 2 ՆՈՒՀ և Լոռու մարզի Արևածագի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ները միացվել են իրար՝ լուծարվել են և նրանց փոխարեն ստեղծվել է նոր «ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը, որը ներկայումս ունի 26,7 հաստիքային միավոր:

Առաջիկայում նախատեսվում է նաև Մղարթ բնակավայրում բացել «ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի ևս մեկ խումբ:

## Կապիտալ ծրագրեր

Մինչև խոշորացումը /2017թ./	Խոշորացումից հետո <sup>1</sup>
<p>1. Օձուն փողոցային լուսավորություն - 9,9 մլն դրամ, կոյուղագծի կառուցում՝ 18 մլն դրամ, մանկապարտեզի շենքի նորոգում՝ 12մլն դրամ:</p> <p>2. Ամոջ՝ փողոցային լուսավորություն - 2,75 մլն դրամ:</p> <p>3. Արևածագ՝ միջն. դպրոցի ճաշարանի նորոգում - 4,8 մլն դրամ:</p> <p>4. Այգեհատ՝ համայնքային կենտրոնի կառուցում – 18 մլն դրամ:</p> <p>5. Հագվի՝ Հանդիսությունների սրահի կառուցում – 30 մլն դրամ:</p> <p>6. Արդվի՝ «Պասիվ արևային ջերմոցի կառուցում» - 21,5 մլն դրամ:</p> <p>7. Կարմիր Աղեկ, Ծաթեր և Մղարթ բնակավայրերում կապիտալ ծրագրեր չեն իրականացվել:</p>	<p>1. Արդվի՝ խմելու ջրագծի կառուցում-6,5 մլն դրամ:</p> <p>2. Հագվի՝ խմելու ջրագծի կառուցում-12,3 մլն դրամ</p> <p>3. Ձեռք է բերել աղբատար մեքենա:</p>

ՀՏՀՀ-ի ծրագրով նախատեսվում է ձեռք բերել JCB կամ համարժեք ունիվերսալ տեխնիկա և համակցված կերերի հոսքագիծ:

Լեհաստանի դեսպանատան հետ համատեղ ձեռք կբերվի «Օձունի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի համար գույք:

---

Ինդրում են յուրաքանչյուր եռամսյակ լրամշակել և ներկայացնել թարմացված տեղեկատվությունը պահպանելով հինը:<sup>1</sup>